ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԱԿ-09.06.01.26/3
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

քաղ.Երևան «29»«հունվար» 2021թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Ն. Հարությունյանի (այսուհետ՝ նախարարություն), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Գորիսի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ը (այսուհետև՝ Կատարող), ի դեմս կազմակերպության տնօրեն՝ Հ. Շալունցի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ կողմեր), 2020 թվականի դեկտեմբերի 30-ի «ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2215-Ն (այսուհետ որոշում) որոշումը, 09.06.01 «26.Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպմանն օժանդակող միջոցառումներ» ծրագրով (այսուհետ՝ ծրագիր) նախատեսված ուսումնական հաստատություններում սովորողների կրթության կազմակերպմանը և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ներառմանն աջակցելու նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1.Սույն պայմանագրով նախարարությունը պարտավորվում է որոշման 09.06.01 «26.Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպմանն օժանդակող միջոցառումներ» ծրագրով (այսուհետ՝ ծրագիր) նախատեսված ուսումնական հաստատություններում սովորողների կրթության կազմակերպմանը և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ներառմանն աջակցելու նպատակով կազմակերպությանը հատկացնել մինչև 76131000 (յոթանասունվեց միլիոն մեկ հարյուր երեսունմեկ հազար) ՀՀ դրամ գումար, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2.Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Նախարարությունն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված տուգանքը,

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները,

2.1.5. սույն պայմանագրի 2.4.4 կետում նշված ժամկետներում կազմակերպության կողմից կատարողական հաշվետվությունները չներկայացնելու դեպքում ժամանակավորապես դադարեցնել գումարի տրամադրումը:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը նախարարության կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը,

2.2.2. նախարարության կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Նախարարությունը պարտավոր է՝

2.3.1.ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը,

2.3.2.կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ

2.3.3.իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ,

2.3.4.իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, պետական մարմինը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է կազմակերպությանը:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1.իրականացնել ծրագրի շրջանակներում նախարարության կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3.կատարել նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4.մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը, իսկ տարեկան կտրվածքով՝ մինչև հաջորդ տարվա հունվարի 25-ը ներկայացնել իրականացված միջոցառումների վերաբերյալ կազմակերպության կատարողական հաշվետվությունները,

2.4.5.սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6.նախարարության կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ նախարարության կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7.ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.8.չծախսված գումարի վերջնական, տարեվերջյան մնացորդը (տնտեսում և խնայողություն) վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ոչ ուշ, քան 2021 թվականի դեկտեմբերի 20-ը:

2.4.9.ավարտված միջոցառման փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը (հրամանով հաստատված կարգի համաձայն և ժամկետներում) ներկայացնել պետական մարմին, նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են ՊՈԱԿ-ում և վերջինս պատասխանատվություն է կրում դրանց իսկության համար:

3. Մոնիթորինգը

3.1.Նախարարությունը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2.Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3.Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ և կատարվում են առաջարկություններ:

3.4.Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5.Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Նախարարությունը՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը կազմակերպությանը կտրամադրի համաձայն որոշմամբ նախատեսված եռամսյակային համամասնություններին համապատասխան:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է նախարարությանը փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Նախարարությունը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

7.3. Պայմանագիրը կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Գորիսի տարածքային մանակավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3	ք. Գորիս, Ազումանյան 6
Կառավարական տուն 2	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 900288000046
Հ/Հ 900011011732	ՀՎՀՀ 09205538
ՀՎՀՀ 02698732	
Նախարարության գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Ն. Հարությունյան	_____ Հ. Շալունց
/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված
«29»«հունվար» 2021թ.
կնքված ԱԿ-09.06.01.26/3 պայմանագրի

Միջոցառումներ

«Համընդանուր ներառական կրթության համակարգի ներդրում» ծրագրի «Գորիսի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպմանն օժանդակող

Հ/հ	Միջոցառումների անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնաժամկետը
1.	Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքների գնահատում	Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում տարածքային մակարդակում՝ թվով 26 հանրակրթական ուսումնական հաստատություններում:	Գորիսի տարածաշրջանում՝թվով 26 /կցված 30 դպրոց, 22 ՆՈՒՀ/ հանրակրթական ուսումնական հաստատություններում կիրականացվի սովորողների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում	Կգնահատվեն ընդհանուր թվով 52 երեխա	30.12.2021թ.
2.	Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցում	Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցում՝ տարածքային մակարդակներում գնահատված երեխաներին:	Գորիսի տարածաշրջանում՝թվով 26 հանրակրթական ուսումնական հաստատություններում տարածքային կենտրոնի մասնագետների կողմից կտրամադրվի մանկավարժահոգեբանական աջակցություն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց, կիրականացվեն տնայցեր՝ տնային պայմաններում ուսուցմանն աջակցելու նպատակով:	Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցում՝ թվով 145 երեխայի	30.12.2021թ.
3.	Խորհրդատվությունների տրամադրում և խորհրդատվական այցեր	Խորհրդատվությունների տրամադրում սպասարկման տարածքի հանրակրթական ուսումնական հաստատությունների	Խորհրդատվություններ կտրամադրվեն գնահատման և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգի, անհատական ուսուցման պլանի, երեխայի կրթության	Կտրամադրվեն ընդհանուր թվով 150 խորհրդատվություններ և ուսուցողական դասընթացներ՝ 35 ուսումնական	30.12.2021թ.

		մանկավարժական աշխատողներին, երեխաների ծնողներին	կազմակերպման ու սոցիալական ներգրավման վերաբերյալ	հաստատություններում, իսկ Կենտրոնում կտրամադրվի շուրջ 10 խորհրդատվություն: Կենտրոնի կողմից իրականացրած խորհրդատվություններից կօգտվեն ընդհանուր թվով 550 անձինք:	
4.	Մշտադիտարկում		Կիրականացվի մոնիթորինգ/քարտեզագրում կենտրոնի կողմից սպասարկվող դպրոցներում և այլ հաստատություններում, որտեղ սովորում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ	Մոնիթորինգը կիրականացվի ընդհանուր թվով 26 ուսումնական հաստատություններում	30.12.2021թ.
	Ընդամենը գումարը			76131000 ՀՀ դրամ	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,
Կառավարական 2 շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011011732
ՀՎՀՀ 02698732
Նախարարության գլխավոր քարտուղար՝

_____ Ն. Հարությունյան
Կ.Տ (ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ
«Գորիսի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ
ք. Գորիս, Ազումանյան 6
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900288000046
ՀՎՀՀ 09205538
Տնօրեն՝

_____ Հ. Հայունց
(ստորագրություն) Կ.Տ